



## 14. ԽՈՒԴԱՎԵՐԴԻ :

Ավալ ժամանակին ըլնում ա չիլնում մի թագավոր: Էդ թագավորը էնքամ մալ ու դոլվաթի տեր ա ըլնում, որ էլ չէլած. սաղ աշխարքի թագավորներից հարուստ ա ըլնում, համա ընչին էր պետքը, խեղճի աշքին ոչ մի բան չէր գալի:

Խեղճը ըսթան մալ ու դոլվաթի միջին մի պտուղ չոմներ, որ իրանից եղը իրա կարողությունը, իրա թագավորությունը վայելեր:

Ամեն օր ըսենց դառը-տխուր դուա էր գալի իրա ամարաթի աղաքի Անմահական բաղզումը ման գալի, էլի ըսենց դառը-տխուր եդ դառնում ամարաթը:

Մի դարվիշ ա ըլնում, որ աշքը մի սարի վրա ա ըլնում, չոմքի էդ սարումը շատ մալ ու դոլվաթ կար, միջին էլ մի հոմարով Ֆանառ. Էդ Ֆանառը ինչ ուզենայիր՝ անիլ կտար քեզ հմար:

Էդ դարվիշը լավ ուամ քցել ա իմանում:

Մի օր ասում ա. ՇԹԵՐԵՄ ուամ քցեմ, բալքի մինը գտնվի, որ կարենա մննի էդ սարը՝ Ֆանառը հանի տա ինձա: Ռամ կքցի՝ դուս կդա էդ թագավորի տղի վրա:

Էգսի օրը վե կկենա կընկնի ճամփա դպա էդ թագավորի երկիրը:

<sup>1</sup> Խուդավերդի թուրքերեն նշանակում է՝ Աստվածատուր (Ս. Բ.):

Ըստնց կէթա, կէթա, կէթա, շատն ու քիչը աստոծ գիտա,  
գհանի էն թագավորի երկիրը:

Դուզ կէթա թագավորի ամարաթի աղաթի խնամաքարին կնըս-  
տի. թագավորի նորաները դուս կդան էս դարվիշին կհարցնեն.—  
Հը՛, ի՞նչ ես ուզում, դարվիշ բարա:

Դարվիշը կասի. — Եկել եմ թագավորի կուշտը, բան ունեմ:

Նորարները կէթան թագավորին իմաց կտան, թե՝ ըստնց մի  
դարվիշ էկել ա քեզ տենա:

Թագավորը կհամայի մի բուռ ոսկի տան, ճամփու դնեն:  
Կտանեն մի բուռ ոսկի կտան դարվիշին, որ էթա:

Դարվիշը շիրիցը կհանի էրկու բուռ կղրկի թագավորին, կա-  
սի. — Ես աղքատ չեմ, ես էկել եմ թագավորին իրան տենամ, թա-  
գավորի հեննա գործ ունեմ:

Նորարները կէթան թագավորին կասեն դարվշի ասածները:

Թագավորը էն սհաթը կհամայի, որ նեքսև թողան՝ գա տենա  
ի՞նչ ա ուզում էդ դարվիշը:

Կէթան դարվիշին կրերեն թագավորի կուշտը: Դարվիշը նեքսև  
կմնի խոր գլուխ կտա, ձեռները կդնի զոշին կկաննի:

— Հը՛, դարվիշ բարա, ի՞նչ ես ուզում, խի՞ ես էկե, — հարց-  
նում ա թագավորը:

— Զա՛դ չեմ ուզում, քու սաղո՛ւթյունն եմ ուզում, — ասում ա  
դարվիշը, — էկել եմ, որ քու դարդին դարման անեմ:

— Է՛հ, դարվիշ բարա, ուզա ուզածդ տամ, թող զնա՛ քու  
բանին, դու ի՞նչ կարաս իմ դարդին դարման անի, — ասում ա  
դառը-տիսուր թագավորը:

— Թագավորն ապրած կենա, ես փողի կարոտ չեմ. ո՛չ էլ  
բանի հմար եմ էկե, հենց քու դարդի խաթեր էկել եմ դարդիդ  
դարման անեմ, — ասում ա դարվիշը:

— Որ ըտքան գեմ ես ընկնում, ա՛յ դարվիշ, քեզ կասեմ իմ  
դարդը, համա դու իմ դարդին դարման շես կարա անի: Ա՛յ, տե-  
նո՞ւմ ես իմ ըսքան մալ ու դոլվաթը, իմ զոռքայությունը, որ ին-  
ձանից զոռքա, ինձանից հարուստ թագավոր շկա սաղ աշխարքու-  
մը, համա ի՞նչ անեմ, մի պտուլ շունեմ, որ իմ մահից եղը իմ  
ըսքան մալ ու դոլվաթը վայելի, իմ երկրին թագավոր ըլնի. հենց  
էդ դարդն ա, որ ինձ գշեր-ցերեկ էրում ա, փոթոթում, — ախ անե-  
լոն ասում ա թագավորը:

— Թագա'վորն ապրած կենա, ի՞նչ կտաս, որ ես մի ընենց քեզ անեմ, որ քեզ մի լավ տղա ըլնի, — ասում ա դարվիշը:

— Որ սադ թագավորությունս էլ ուզես կտամ, թաթլա դուշմանահար լընեմ ես:

— Զէ՛, թագա'վորն ապրած կենա, սադ թագավորությունդ քեզ հալալ ըլնի. թե որ խոսք կտաս տղեդ մենձացած վախտը տաս ինձ, էնա դարդիդ էս սհաթը դարման կանեմ, որ էլի սաղ-սալամաթ բերեմ տղեդ քեզ տամ. թե դարու ես՝ լավ, թե չէ՛ հո դու դիտաս. ես հենց եկել եմ քու խաթեր, ոնց որ քեզ սրտացավ բարեկամ:

— Դա՛րու եմ, աղպեր, բա՛ դարու չե՛մ. թո՛ղ ինձ տղա ըլնի՝ մի քանի տարի էլ թո՛ղ դու կշտին ապրի. բան չկա, մինակ ընդար ըլնի, որ էլի տղիս սաղ-սալամաթ բերես տաս ինձ, — ասում ա ուրախ-ուրախ թագավորը:

Էն սհաթը դարվիշը ջիբիցը մի խնձոր ա հանում տալի թագավորին, ասում ա. — Ա՛ռ, թագա'վորն ապրած կենա, էս խնձորը կես արա, կեսը դու կե, կեսն էլ տու թագուհուն, որ նա ուտի. թե քեզ տղա չէլավ՝ իմ արինը քեզ հալալ ա, — ասում ա դարվիշը ու խոր գլուխ տալի, ամարաթից դուս գալի, էթում իրա բանին:

Թող դարվիշն էթա, մենք գանք խարարը տանք մեր թագավորիցը:

Թագավորն ա՛ ուրախ-ուրախ խնձորը առնում ա մննում թագուհու օթախը. խնձորը կես ա անում, կեսը տալիս ա թագուհուն, կեսն էլ ինքն ա ուտում. Անց ա կենում մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, մախլասի՛ ինն ամիս, մեր թագուհին ծունկ ա շոքում մի նաշխում, սիրուն տղա ա բերում. էնքա՛մ սիրուն, էնքա՛մ սիրուն, որ էլ չէլած: Թագավորը, որ տղին չի տենում՝ ուրախությունիցը խելքը էթում ա, էնքամ ա ուրախանում. բերում են լավ կնունք են անում, սադ պալատականներովը օխտն օր, օխտը գշեր քեֆ են անում, տղի անումն էլ դնում են Խուղավերդի:

Հսենց ուրախ անց ա կենում մի տարի, էրկու տարի, տասը տարի, տասնհինգ տարի, ըսկի թագավորի միտը չի ընկնում դարվիշին տված խոսքը: Հենց էդ վախտերքին օրեն մի օրը թագավորի նոքարները դալիս են թագավորին ասում. — Թագա'վորն ապրած կենա, մի դարվիշ ա էկե. ուզում ա քեզ տենա:

Թագավորը հենց էս ա լսում՝ ուշը էթում ա, վեր ընկնում: Թոմ-  
մա նաղիր-վեզիրը, քոմմա պալատի մարդիկը թոփ են ըլնուա  
թագավորի ուշը վրա են բերում. նո՞ր թագավորի խելքը, որ գլուխն  
ա դալի, կանչել ա տալի նեքսն դարվիշին:

Դարվիշը գալիս ա նեքսն, խոր գլուխ ա տալի թագավորին,  
ասում.— Թագա'վորն ապրած կենա, մի՛տդ ա, որ դու ինձ խոսք  
տվիր տղիդ հմար. հմի էկել եմ, խոսքիդ տե՛ր ես, թե չէ:

— Այս՝ դարվիշը բարա, վերն՝ աստոծ, ներքեւ՝ դու, ուզա  
ե՛րկիր, քա՛ղաք, մա՛լ, դո՛լվաթ, հարստությո՛մ՝ քոմմա տամ,  
թարլա տղիցս ձեռ քաշի, մեղք եմ, ումուղ-ապավենս մի՛ կտրի,—  
մղկտալոն ասում ա թագավորը:

— Զէ՛, թագա'վորն ապրած կենա, մի զադի էլա փափադ չեմ,  
մենակ տղեդ եմ ուզում, դու գի՛տաս. իմացի, որ շտաս անրը  
շատ փիս կըլնի,— ասում ա դարվիշը:

Թագավորն ա՝ գառը-տխուր լալով-լալալքով էթում ա տղի  
կուոր բոնում բերում տալի դարվիշին, ասում ա.— Դա՛րվիշ, դո՛ւ  
քու ասածը արիր, ասսու սիրուն, ամանաթ, ամանաթ տղես քեզ  
ամանաթ տա՛ր, համա էլի տղես բերես,— աղաշանք ա անում թա-  
գավորը: Տղի ոլուխը, թուշը սպաշում ա՝ ճամփու դնում:

Թագավորին թողանք ըստե, գանք խարարը տանք դարվշիցն  
ու թագավորի տղիցը:

Դարվիշը թագավորի տղին վեր ա ունում ընկնում ճամփա.  
էթում են, էթում են, էթում են՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մախ-  
լասի՛ մի շարաթ, հասնում են մի մենծ սարի. դարվիշը շիբիցը  
էրկու թլսմի գիրք ա հանում. մինը տալիս ա թագավորի տղին,  
ասում ա.— Ա՛ռ էս զիրքը դու կարդա, էս մինն էլ ես կկարդամ,  
էնքա՛մ կկարդանք, որ էս մենծ սարը, տենում ես, էրկու փայ կըլ-  
նի, հենց որ սարը կրացվի՝ դու անխոս նեքսն կմննես, ընտե մի  
Ֆանառ կա՛վի կունես էլի անխոս դուս կգասո: Տե՛ս, ընտե լիքը  
ակնունք, անգին քարեր կա, շըլնի՛ թե թամահ անես՝ վերնես հա՛,  
թե չէ՛ սարը էլի եղ կիսփիլի, դու կմնաս ընտե, ես՝ ըստե: Հենց որ  
Ֆանառը դուս բերես էն քոմմա մերն ա ու միրը, շոմքի էն Ֆա-  
նառը մենծ հունար ունի. իմացա՛ր: էրկուսս էլ ֆողեց-ֆողի կկոր-  
չենք:— էս քոմմա թամբահ ա անում դարվիշը թագավորի տղին  
ու ասում.— Դե՛, կարդա՛, ես էլ եմ կարդում:

Էրկուսն էլ իրար հեննա կաննում են ու կարդում. ըսենց կարդում են, կարդում են. մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, մին էլ ի՞նչ տեհան՝ հրես, զրուստ որ, սարը ճղվեց. էրկու կես էլավ, էն սհաթը թագավորի տղեն նի կմննի նեքսե, կէթա ֆանառը վե կունի, եղ կգա դպա դուս, համա դե իսանի թամահ էր էլի՛ շէլավ, որ էն անգին քարերը, էն կիտուկ-կիտուկ բոլիանտները շտեհա՛վ, խելքը մաղելոն միտք արեց, թե. «Եա՛տ էլ դարվիշը ասեց՝ մի՛ վերնի. ըստե ի՞նչ կա որ, հազիր վե կունեմ, զրադին էլ մոտ եմ, էն սհաթը մի ոտ կքցեմ՝ դուս կթոնեմ էն էրեսը. ընշանք սարերը գան իրար կպնեն զաթի ես էլ դուս կթոնեմ»: Կասի, կպազի էդ կիտած-կիտած բոլիանտների կշտին՝ ծոցերը, ջերերը կլցնի:

Էնքա՛մ դարվիշը ձեն կտա. «Ա՛ման, Խուղավերդի, վեր ածա՛, սարերը կխփվի», Խուղավերդին շի լսի, ջերերը կլցնի. Հենց կուզենա, որ դուս գա՛ սարերը էլ եղ էն սհաթին կգան իրար կկպնին, թագավորի տղեն կմնա սարի միջին, դարվիշը՝ էս դիհը:

Դարվիշը էս որ կտենա՝ շատ վա՛յ կտա գլխին, համա դե էլ ի՞նչ կարար անի, ձեռին ճար շկար:

Վախլությունիցը գլուխ կառնի էն թագավորի երկրիցը կկոր-շի, որ ինչ ա՛ թագավորը շիմանա իրա արածը, իրան քրալլա անել շտա:

Թող դարվիշը գլուխ առնի կորչի, մենք գանք խարարը տանք էն խեղճ տղիցը:

Տղեն էս զուումը որ տենում ա, շատ ա գլխին ոտին տալի, համա դե՛ ձեռին ի՞նչ կար, ի՞նչ կարար անի, ո՞նչ մի հնարք շէր գիտա՛ ո՞նց դուս գա էդ եքա սարի միջիցը. Էնքան ըսենց միտք ա անում, լալիս ա, ընշանք լավ նղըղում ա, գլուխը դնում գեննին, ֆողի վրա քնում ա:

Շատ ա քնում, թե քիշ, աստոծ ա խարար, բիրդան մի ջրի խշոցից զարթնում ա. զարթնում ա տենում ա՛ էլի էն սարի միջին ա. էս յան ա ման գալի, էն յան ա ման գալի. տենում ա հրեն մի փետի կտոր. էթում ա փետը վերնում գալի էն ջրի խրշշոցի տեղը: Փորփըրում ա ըսենց, էնքամ փորում ա՛ բիրդան մի եքա գետ ա բացվում, ընե՞նց վարար, ընե՞նց վարար, որ էլ շեմ կարա ասի: Մին էլ տենում ա հրես մի մենծ տախտակի կտոր ջրի էրեսին գալիս ա. անխոս տախտակը կալնում ա, ինքը վրեն նստում, ասսու

անումբ տալիս ա՝ ընկնում ճամփա. միտք ա անում, թե բալքի էս շուրջ տանի մի լիս աշխար հանի:

Ըսենց տղեն դրի էրեսին տրմպտըմպալոն էթում ա. էթում ա մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, մախլասի՝ մի օր, տենում ա յավաշ-յավաշ լիս ա էրևում: Մի թիրա էլ որ էթում ա՝ բիրդան տախտակը դեմ ա ընում մի ծառի բոքի, էլ շի էթում: Տղեն որ տենում ա տախտակը էկավ դրաղ, ինքն էլ վեր ա գալի վրիցը է՛ս յան ա էթում, է՛ն յան ա էթում՝ տենում ա ըստերանք ըսկի իսանառոտ շի էրեւում, լափ վիրունի տեղ ա: Նստում ա մի քարի վրա, մի կուշտ լաց ա ըլնում. սրա ձենին մի չորան ա գալի, տենում ա հրես մի սիրունիկ տղա նստած մնն-մենակ լաց ա ըլնո՞ւմ, լաց ա ըլնո՞ւմ, ո՞նց լաց, որ կողքի քարերն են մղկտում:

Մոտ ա գալի հարցնում.— Տղա՛, օձն իրա պորտովը, զուշն իրա թեռվը ըստերանք չեր էկե, դու ո՞նց սիրոտ էս արե էկե:

Տղեն ո՞ր գլուխը բանձրացնում ա շորանին տենում՝ ուրախանում, աշխարովը մին ա ըլնում, ասում ա.— Ա՛մի ջան, ա՛մի, սոված մեռա, ըսկի զադ շո՞ւնես ուտելու:

Զորանը ասում ա.— Ա՛ռ, այ որդի, ես եմ էս էրկու գարե ճաթը, ա՛ռ ըս էլ դու կե՛ր:

Տղեն ճաթը առնում ա ուրախ-ուրախ վրա պրծնում՝ ընե՛նց ա ուտում, կասես գառան խորոված ըլներ:

Զորանը վերնում ա տղին տանում իրա տունը, կնկանը ասում.— Ա՛ռ, ա՛յ կնիկ, աստոծ մեզ մի թազա տղա էլ ա դրկե. թող օխտը տղա չունենաք, ութը ունենաք: Լա՛վ պահի, մուղայիթ կաց, քու էրեխերանցիցը մի չկի. ես էլ էն վիրունի տեղը կաթ, մածուն, զադ կշինեմ, կրերեմ յոլա կէթանք:

Կնիկը ուրախ-ուրախ ջուր ա զնում, թամուզ տղի շորերը լվանում, զլուխ-մլուխը թամզացնում ու իրա էրեխերանց հենա խառնում:

Ըսենց անց ա կենում մի տարի, էրկու տարի, օրենը մի օր էս տղի միտն ա ընկնում, որ իրա շիրին անգին քարեր կա:

Մինը հանում ա տալի մորը, ասում ա.— Ա՛ռ, ա՛յ մեր, տար բազար էս անգին քարը ծախի, բե՛ յոլա էթանք, համա տես շխարնըկես:

Մերը ուրախ-ուրախ քարը տղի ձեռիցը առնում ա, էթում բա-

դար. դուզ տանում ա մի սառաֆի կուշտ, հանում ա քարը սառաֆին շանց ա տալի ասում ա.— Զէ՞ս առնի էս քարը:

Սառաֆը որ չի տենում էդ անգին քարը, խելքը էթում ա՝ էնցա՛մ հավանում ա, ասում ա.— Խի՞ չեմ առնի, զաթի ես էլ ըդենց քարի ի ման գալի, գինն ի՞նչ ա:

— Ի՞նչ արժողությունն ա, էն տու,— ասում ա կնիկը:

— Հարիր մանեթ կտամ,— ասում ա սառաֆը:

Կնիկը հենց իմանում ա իրա վրա ծիծաղում ա, ասում ա.— Ի՞նձ ես ձեռ առե:

— Հինգ հարիր կտամ,— ասում ա սառաֆը ու շիրիցը փողը հանում ա, համբրում:

Կնիկը ուրախ-ուրախ փողը վերնում ա լցնում ջերը, քարը տալի սառաֆին, էթում: Էթում ա բազար, է՛ս յան ա ման գալի, է՛ն յան ա ման գալի, ի՞նչ որ պետք ա առնում ա, էրեխեքանց հմար շորեր, իրա հմար մաշկներ, շորեր, մախլամ՝ ի՞նչ որ պետքն էր, քոմմա առնում ա, էթում ա տաք. կիրակուր էփում, ուսում են, խմում, քեֆ քաշում, պառկում քնում:

Օրենը մի օր էս տղեն մորիցը թաքուն վեր ա կենում էթում բազար, դուզ մի սառաֆի կուշտ: Տղեն էթում ա մի էրկու քար ա ծախում՝ հատը էրկու-իրեք հազար մանեթով: Էթում ա բանահի, խառատի կուշտ, բարշում ա, որ էպի օրը գան իրանց հմար մի ձեռք լավ տներ շինեն: Թողում ա գալի տուն:

Դրուստ որ, էպի օրը էն բաշտեն ուստեքը իրանց ֆաճլեքանց հեննա գալիս են սրանց տները շինում: Մի շարթումը մի էնթավուր տներ են կայնացնում, որ տենողի խելքը էթում էր: Տղեն բերում ա գրանց հաշիվ-մաշիվ վերջացնում, ուստեքանց ճամփու դնում:

Իրիկունը հերը գալիս ա, տղեն ասում ա հորը.— Ա՛յ հեր, բոլ ա շորանություն անես, մեղ ընքան մալ ու դոլվաթ ունենք, որ քանի սաղ ու կենդանի ենք ուստենք չի հատնի. ուր մնաց, որ քոմմքս էլ հասել ենք. ա՛յ մի-մին ախպորտանցս պսակենք, մի-մի գործի դնենք, մեղ հմար էլ դինչ ապրենք, զաթի քու էլ դինջանալու վախտն ա:

Հերը տղի խոսքին շատ ա հավանում, վեր ա կենում տղի ճակատը պաշում, օրհնում, որ ըդենց քարի ժառանգ ա, ուրախանում, աշխարովը մին ա ըլնում:

Բերում են ամեն ամիս մին-մին տղերքանցը նշան դնում,

պսակում, լավ-լավ աղջկերք ուզում իրանց հմար, մին-մին գործի կպնում՝ դլուխ պահում:

Մի օր էլ հերը կանչում ա Խուղավերդում, ասում ա.— Որդի, սրին հմի քունն ա, քեզ հմար պտի աղջկի ջկենք, պսակենք:

Տղեն էս որ լսում ա՝ հորը, նստում ա, մին-մին նազլ ա անում իրա դիսի անցկացածը, ոնց որ ես ձեզ նազլ արի:

Հորը ասում ա.— Հմի պտի ես էթամ իմ հորնումոր կուշտը, հմի նրանք դարդավարամ են էլե. մեղք են, նրանց ծերության վախտը մի միսիթարեմ, նոր դինչ մեռնեմ:

Չորանը որ իմանում ա, թե Խուղավերդին թագավորի տղա ա՞ շատ ա զարմանում, որ էսքան լավություն ա արե իրանց, ըստան տարի էլ իրան հնազանդ տղություն ա արե: Շատ գեմ կընկնի, որ չէթա, համա դե, ինքն էլ էր շիգյարատեր, շէր կարա եղ քցի:

Կնկանը ասում ա.— Ա'յ կնիկ, վե՛ր, լավ ճամփի թագարեք տես, որ մեր տղեն պտի ճամփա էթա, ճամփին նեղություն շրաշի:

Կնիկն ա՝ վեր ա կենում, ոնց որ կարգն էր, լավ ճամփի թագարեք ա տենում: մի էրկու հավ ա խաշում, քութիա ա էփում, զաթա ա թխում, ճամփի պաշար ա կապում, հազրում, էդ դշերն էլ ընլանք լիս լավ քեֆ են անում, էն բաշտեն Խուղավերդուն ճամփում:

Թագավորի տղեն ա՝ ասսու անումը տալիս ա, ընկնում ա ճամփա:

Էթում ա, էթում ա, էթում ա՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, մի չոլ յարանի տեղ մութը վրա ա կոխում. տղի պաշարն էլ զաթի հատել էր, մտքումը ասում ա. ոչս գշեր ըստե սթար անեմ, նո՞ր էն բաշտեն կընկնեմ ճամփա: Դե՛ս ա ման գալի, զե՛ն ա ման գալի՝ մի մենծ քարի տալդի նստում ա դինջանա, որ ինչ ա շանավար, զադ շմոտանա: Տղեն, որ ըտենց մհնակ նստած կըլնի, բիրդան միտը կընկնի իրա Ֆանառը, կասի. «Հլա մի վառեմ տենամ սրա հունարը ինչ էր, որ ես էսքան տարի Հուդի շարշարանքը քաշեցի էս Ֆանառի խաթրու: Ֆանառը կվառի, ի՞նչ տենա՝ հրես շոշս արար էկան աղաքին կաննեցին:

— Հը՛, թագավորի ցեղ, աշխարքը քանդենք, թե՝ շինենք,— կասեն արարները:

Տղեն էս որ կտենա շատ կղարմանա, կասի.— Ո՞նչ քանդեք, ո՞նչ շինեք, ես շատ սոված եմ, ինձ մի բան տվեք ուտեմ, դուք գնացեք ձեր բանին:

Արաբները էն սհաթը մի՛ սուփրա բաց կանեն թագավորի տղի աղաքին, մի՛ սուփրա, որ էլ շեմ կարող ասի, ասուու ստեղծած բարիքը լիքը կը լինի, ընե՞նց լավ-լավ կիրակրներ, ընե՞նց լավ-լավ կիրակրներ, որ սկի Խուդավերդին իրա օրում շէր կերե, շէր տեհե:

Խուդավերդին ա՛ սոված վրա ա պրծնում, մի կուշտ ուտում: Որ կշտանում ա, արաբները հացը հավաքում են իրանք անէրեվույթը ըլնում: Թագավորի տղեն էլ թինկն ա տալի էդ քարին, քնում ընշանք լիս:

Որ լիսը բացվում ա, ֆանառը վառում ա, արաբները գալիս են հարցնում.

— Հը՛, թագա'վորի ցեղ, աշխարքը քանդե՞նք, թե՞ շինենք:

Խուդավերդին ասում ա— Ո՞նչ քանդեք, ո՞նչ շինեք, ինձ մի Քյահան ձի տվեք, էթամ մեր երկիրը:

Էն սհաթը արաբները մի Քյահան ձի կրերեն, իրա լավ-լավ սարքերով, ընե՞նց ձի, ընե՞նց ձի, ընե՞նց ձի, որ էլ շեմ կարա ասի:

Էն սհաթը թագավորի տղեն կնստի ձին, կորզանդի՛ ձին կթռնի կէթա: Շատ կէթա, քիլ կէթա, կհասնի մի գեղի ղրաղի. կտենա հրե գերեզմաններ ա էրևում, մի բոլ մարդ էլ կիտվել են մի մեռի զլսի, իրար ձեռից խլում են ու ջարդում. ո՞նց են ծեծում, ո՞նց են ծեծում, որ աստոծ ա խարար:

Դուզ ձին քշում ա դրանց կուշտը. ձիուցը վեր ա գալի, դրանց հարցնում ա.— Էդ խեղճ մեռելը ձեզ ի՞նչ ա արե, որ ըդենց ծեծում, ջարդում եք. մեղքը շի՞:

Էն մարդիկը ասում են.— Դու շես խարար, թե սա մեր զլովսը ի՞նչ օյին ա դրե:— Մինը ասում ա. «Ինձ քսան մանեթ ա տալու, մեկելն ասում ա, թե. «Ինձ հիսուն մանեթ», մինը՝ «Տաս», մախաս՝ ի՞նչ գլխներդ ցավացնեմ, սրանց քոմմքին էլ պարտք ա էլե էս մեռելը. հենց ումից վեր ա կալե, եղ շի տվե:

Էն սհաթը Խուդավերդին զիրիցը մի բոլ փող ա հանում, սրանց քոմմքի պարտքն էլ տալիս ա; ճամփու ա դնում իրանց բանին: Եննա մի պումուր էրեխա ա ուստ գալի, դրկում ա, տերտեր ա բերիլ տալի, մարդ ա բերում, ոնց որ կարգն ա, թազադան էս մեռին թաղում են, էթում իրանց բանին. ինքն էլ ձին սարքում ա, էլ եղ նիլնում ընկնում ճամփա:

Էթում ա, էթում ա, էթում ա՝ մի սհաթ, էրկու սհաթ, բիրդան

եղ ա մտիկ անում, ի՞նչ տեսնա՝ էրկու ձիավոր ընկել են իրա են-նուցը, ո՞նց են քշում, ո՞նց են քշում, ո՞նց որ զյուլա դիպած: Աղաբի ձիավորի ձին սկ ա ըլնում, ևտնինը՝ կապիտ: Խուդավեր-դին սրանց որ տեսնում ա, վախլությունիցը չի իմանում, թե որդե տափ կենա: Մին էլ ինչ ա տեսնում՝ եղի կապիտ ձիավորը էկավ վրա հասավ աղաբի սկ ձիավորին վե կալավ տվեց գեննովը, բանֆորի արեց:

Շատ զարմացավ, թե էս ի՞նչ բան էր, էս կապիտ ձիավորը ով էր, որ բսենց իրան ազատեց. կայնում ա ընշանք էն կապիտ ձիավորը դալիս ա թագավորի տղի կուշտը, ասում ա.— Սրանից եղը դու արխեին գնա՞. էլ ոչ մի զիան չի գա քեզ:

Էս ասում ա, ուզում ա, որ էթա, Խուդավերդին ասում ա.— Ցավա՞շ, դու ո՞վ իր, որ էկար ինձ ըդենց փորձանքից ազատեցիր, էդ լավությանդ տակիցը ընշով կարամ դու գա:

Կապիտ ձիավորն ասում ա.— Ես էն մեռլի Հրեշտակն եմ, որ դու էն մարդկերանց ձեռիցը պրծացրիր, ընենց առոք-փառոք թա-ղեցիր. էն սկ ձիավորն էլ էն դարվիշն էր, որ քեզ ըդենց փորձան-քի մեջ էր քցե. Հմի որ իմացել ա, թե դուս ես էկել լիս աշխարք, էկել էր, ուզում էր քեզ սպանի, որ Ֆանառը ձեռիցդ առնի. Համա ես նրան ընե՞նց տվի գեննովը, որ ո՞նչ տվեց, ո՞նչ առավ՝ հենց տեղն ու տեղը մնաց մեռած:

Եննա մեռլի Հրեշտակը շիրիցը մի խնձոր ա տալի թագավորի տղին, ասում ա.— Ա՛ռ էս խնձորը, հերնումերդ կուտնն կշահե-լանան, աղլուխդ էլ տուր ձիուր քրտինքը սրբեմ՝ տամ տար, հեր-նումերդ րու հմար էնքամ լաց են էլե, որ ջուխտն էլ քոռացել են՝ էս աղլուխը որ բսեն աշքներին, էն սհաթը կսաղանան:

Խուդավերդին ա՝ ուրախ-ուրախ աղլուխը տալիս ա մեռլի Հրեշտակին, նա էլ ձիուր քրտինքը սրբում ա՝ էլի եդ տալի Խուդա-վերդուն, հեննեն մնաս բարով ա անում ու էն սհաթը անէրեւոյթք ա րիսում: Խուդավերդին շատ ա զարմանում, թե՝ էս ի՞նչ էր, ըսենց էկավ ու գնաց. ասուն փառք ա տալի ընկնում ճամփա:

Էթում ա, էթում ա, էթում ա՝ մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, մի օր, մախլասի՝ մի շարաթ, հասնում ա իրա քաղաքի սնուոր. տեսնում ա հրե մի նախրչի նախիրը արածացնում ա, էթում ա էդ նախրչու կուշտը հարցնում ա.— Բարո՞վ նախրչի, — ասում ա,— ըսկի ձեր քաղաքումը ի՞նչ կա, ի՞նչ չկա:

— Ասսու հա՛զար բարին, ա՛յ ճամփորդ աղպեր, — ասում անախրչին, — մեր քաղաքի մենծ ցավն էն ա, որ մի լավ թագավոր ունենք՝ նա մինումար մի տղա ուներ, էդ տղեն խարլությունով մի դարվիշ տարավ, էլ եդ շբերց. մեր թագավորը ու իրա կնիկը էնքա՞մ լաց էլան, որ էս էրկու տարի ա ջուխտն էլ լափ քոռացել են, աշխարքի լսիցը զյկվել, մեր սաղ խալին էլ էն խեղձերի հմար դարդի մեջ ա:

Տղեն էս որ լսում ա, նախրչուն ասում ա. — Որ ըտենց ա՛ թեղ մազի խաբար տար ձեր թագավորին, ասա՛, որ տղեդ էկել ա, հմի, որդե որի ա կգա:

Նախրչին, որ էս խաբարը չի լսում, ուրախությունիցը օխտը գազ ծլունկ ա ըլնում, ընկնում էդ տղի ունները. ուզում ա, որ աղի պես լիզի, նոր որ ուշը վրա ա գալի, վազելոն էթում ա թագավորին խաբար տանում. Դուզ էթում ա թագավորի ամարաթի դուռը ժեժում, նոքարները դուս են գալի հարցնում. — էդ ո՞վ ա.

Նախրչին ասում ա. — Ես եմ՝ ձեր գեղի նախրչին, ուզում եմ թագավորին թեղ տենամ, վազ գործ ունեմ հեննեն:

Նոքարները էթում են թագավորին իմաց անում. թագավորն ասում ա. — Գնացեք կանչե՞ք, տենանք ո՞վ ա:

Նոքարները էթում են նախրչուն բերում նեքսեւ:

Նախրչին ա՛ ուրախ-ուրախ էթում ա թագավորին զլովս ա տալի ասում. — Թագա՞վորն ապրած կենա, տղեդ գալիս ա, հրե մեր սնոռումը դինշանում ա:

Թագավորը էս որ չի լսում՝ ուրախանում, աշխարովը մին ա ըլնում: Էն սհաթը հրամայում ա նախրչուն լավ-լավ փեշքաշներ տան, ճամփու դնեն. ինքն էլ իրա կնկա հեննա, պալատականների հեննա վեր ա կենում էթում տղի աղաքը:

Տղեն հորն ու մորը տենալու բաշտան վազում ա փաթթվում նրանց ճտովը, պաշպշում. էնքա՞մ ուրախանում են, որ էլ հալ ու հեսար շկար: Նո՞ր էն սհաթը տղեն մեռի Հրեշտակի տված աղլուխը հանում ա հորնումոր. աշքերը սրբում ա: Էն սհաթը սրբելու բաշտան էրկսի աշքերն էլ բացվում ա: Եննա ջիբիցը հանում ա Հրեշտակի տված Խնձորն էլ տալիս ա հորնումորը, որ ուտեն: Ուտում են, էրկուան էլ հենց ուտելու բաշտան դառնում են ջահելքիվան մարդ ու կնիկ: Էլ ի՞նչ քեֆ, ի՞նչ ուրախություն, որ էլ շեմ կարող ասի:

Մի քանի օր, որ տղեն դինշանում ա պրծնում, հերն ասում  
ա.—Ա՛յ որդի, չե՛ս ասի ֆլա՛ն թագավորը զոշուն ա վե կալե,  
դալիս ա մեր վրեն կոիվ:

Տղեն ասում ա.—Ա՛յ հեր, դու ըսկի դարդ մի անի, էս Ֆա-  
նառը ընենց հունար ոմի, որ ի՞նչ ուզենանք՝ անիլ կտանք, որու  
արխեին կաց: Հենց էս Ֆանառի խաթրու էր, որ էն դարվիշը ինձ  
տարավ ու ես էլ էսքամ չարշարվեցի:

Նոր տղեն նստում ա, հորը մին-մին նազլ ա անում իրա գըլ-  
խով անց կացածը, ոնց որ են ձեզ նազլ արի, ու էն սհաթը Ֆա-  
նառը վառում ա:

Արարները դալիս ևն հարցնում.—Հը՛, թագա՛վորի ցեղ, աշ-  
խարքը բանդե՞նք, թե՞ շինենք:

Թագավորի տղեն ասում ա.—Ո՞նչ բանդեք, ո՞նչ շինեք, գնա-  
ցեր ֆլա՛ն թագավորի զոշնի վրա կոիվ,—ու հոր հեննա իրանք  
թաղարեք ևն բաշում, էթում ավի:

Անց ա կենում մի օր, էրկու օր, բիրդան նազիր-վեղիրը գա-  
լիս են խարար բերում, թե.—էն թագավորի զոշունը քոմմա կո-  
տորվել են, նրանցից մի էրկու մարդ անջախ սաղ-մնացին, որ  
խարար տանեն իրանց թագավորին:

Նո՞ր թագավորը հրամայում ա նազրի աղջիկը տան իրա  
տղին: Նազրի աշքը զաթի վաղուց էր թագավորի տղի վրա: Բերում  
են աղջիկը տալի, նշան դնում, օխտը օր, օխտը գշեր հարսանիք  
անում: Հերն էլ իրա թախտիցը վեր ա գալի Խուզավերդուն դնում  
իրա ձեռովք թագավոր:

Ասսանից իրեք խնձոր ա վեր ընկնում. մինը՝ ասողին, մինը՝  
ասիլ տվողին, մինն էլ՝ անկաշ դնողին:

